Աշխատանքի ծածկագիր 2192

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 4-րդ, 25-րդ, 26-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 4

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը ուղղակի կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարությա օրենսգրքի 419 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 25

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բ/ տարբերակն է, որ բխում է ՔԴՕ 86-րդ հոդվածի 1-ին մասի և 203 հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից, իսկ բողոքաբերի փաստարկները վերաբերում են նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքի մեկնաբանություններից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 26

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բացառվում հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2192 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 26-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ